

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԵՆ ԲԱԲՈՒՐՅԱՆԻՆ,
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ԵՎ
ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ,
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ստեփանակերտ

Հարգարժան Տիարք,

Հուզումնալի զգացումներով տոգորված, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղում ենք Ձեզ և Ձեր գործընկերներին Մեր հայրական սիրո ողջույնը և սրտագին մաղթանքը, որ Արցախյան ձեր մայր երկիրը մոտ ապագայում հասնի խաղաղության ափին, ազգությունների ազատ ինքնորոշման, միջազգայնորեն ճվիրագործված սկզբունքի հիման վրա, մի արդար սկզբունք, որի համար ձեր Հանրապետության քաջակորով ազատամարտիկները ճվիրաբերում են իրենց կյանքն իսկ՝ ի պաշտպանություն իրենց հայրենիքի և իրենց ազատության:

Մենք հոգեպես մխիթարված ենք, որ մեր ժողովրդի բազում ազնիվ բարեկամներ թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանյան տարբեր երկրներում իրենց ձայնն են բարձրացնում ի պաշտպանություն ղարաբաղյան ձեր արդար դատի:

Մեր ժողովրդի ազնիվ բարեկամներից մեկն է Ռուսաց Պրավոսլավ մեծ Եկեղեցու Սրբազան Պատրիարք Ալեքսի Բ-ը, որ վերջերս մի նամակով դիմեց Մեզ՝ իր ծանր մտահոգությունները հայտնելով ղարաբաղյան տագնապալի կացության առնչությամբ, փափագ հայտնելով, որ Մենք ևս կոչ անենք հակամարտող կողմերին՝ խնդիր դնելով, որ անմիջապես դադարեն ռազմական բոլոր գործողությունները, և սկսվեն օրինավոր բանակցություններ

կողմերի միջև՝ վերջնապես հաստատելու խաղաղություն և արդար լուծում գտնելու ստեղծված տագնապալի կացության:

Ահա այդ պարտականությունն ենք կատարում Մենք՝ կոչ անելով նաև Ձեզ, որ Ձեր հնարավորը ի գործ դնեք՝ հասնելու խաղաղության ափին, ամրապնդելով ապագա բարեկամության հիմքերը Ղարաբաղյան Հանրապետության և Ադրբեջանի ժողովուրդների միջև:

Մենք հուսով ենք, որ Աստուծո օգնականությամբ հաջողությամբ կպսակվի խաղաղության գործընթացը՝ ի միխիթարություն մեր ժողովուրդների:

Մեծահարգ Տիարք,

Մնում ենք աղոթող Ձեր արևշատության, Ձեր հերոսական ճիգերի հաջողության և վերջնական խաղաղության հաղթանակի համար:

Օրհնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 մարտի 1994 թ.